Ա. ՏԱՐԻ —·(ՑՈՒՆԻՍ 21/4 ՑՈՒԼԻՍ, 1903. — ՌՈՒՍՉՈՒՔ)·— Թիւ 2

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հասցէ՝
Rédaction du journal
VERADZNOUTIOUN
ROUSTCHOUK (Bulgarie)

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱՄԷՆ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ
Տարեկան՝ 10 Ֆրանկ, կեցաւսեայ՝ 5 Ֆրանկ։

Գրութիւնները եւ չեն դարձուր։
Ծանուցումի տողը՝ 20 սանթիմ։

ԱՍՊԵՏՆԵՐ

Տխուր ասպետներ, գողանմա՞ն ասպետներ...։

Ահա մօտ երկու տարի է — աւա՜ղ, վեց-եօթ տարի առաջ էլ կային և, կրկի՞ն աւաղ, դեռ 1891 թուին էլ այդպիսի մի բան եղաւ—ահա մօտ երկու տարի է, ասում ենք, ինչ հայ յեղափոխական շրջաններում տեղի ունեն շրջոթութիւններ։ Պէտք չէ զարմանալ, որ այդ շրջոթութիւնները յարձակումների ձեւի տակ, դառնում են «Հնչակիա և Հնչակեան Կուսակցութեան շուրջը։ Աւելի քան տասն և հինգ տարի է, ինչ այդ մարմինները գրաւած են յեղափոխական ասպարէզը, իրանք էլ առաջացրած լինելով մեզանում յեղափոխական գործը, և դրանց գափնիները—աւա՜ղ, որքա՜ն փբոյտ— քուն չեն տալիս մի կարգի ասպետներին, որոնցից ոմանք հասարակական անճարակներ են և ոմանք՝ խաւնակիչ ու վտանգաւոր վիժուածքներ նոյն իսկ Հնչակեան Կուսակցութիւնից։

Ընդդէմ Հնչակեանութեան մղած այդ ասպետական արշաւանքների ամբողջ և միակ փիլիսոփայութիւնն ամփոփւում է Ֆրանսիական հետեւեալ ասացուածում՝—«Ote-toi de là que je m'y mette» այսինքն՝ «քաշուի՛ր, որ ե՛ս անցնեմ տեղդ»։ Եւ յարաւի, ասպետների տրամաբանութիւնն այս է. —«Պէտք չէ՛ «Հնչակ»... և կամ թող նա մե՛ր ձեռքն անցնէ. պէտք չէ՛ Հնչակեան Կուսակցութիւն... և կամ թող նա մե՛ր ձեռքն անցնէ. պէտք չեն այդ մարմինների գործիչներն ու հիմնադիրները... որովհետեւ մե՛նք ենք, որ կանք և մե՛նք ենք ամէն բան...»

Ա՜հ, անեկիւ՜ղ և անսգիտ՜ ասպետներ...

Եւ զինուած այդ եսական ու կասկածելի մաքրութիւն ունեցող տրամաբանութեան զէնքով, այդ սնափառ ու զէվզէկ ասպետները սկսում են իրանց յարձակողական արշաւանքը։ «Քաշուի՛ր որ, ե՛ս անցնեմ տեղդ» — դ՛ա է նրանց ներքին նպատակը, նրանց հասարակական Credo. «հաւատքը», նրանց «յեղափոխական գործ», նէոթեանա այբ ու բէնը։ Եւ ընդհանրապէս իրանց երազին հասնելու համար նրանք ո՛չ մի խորութիւն չեն դնում միջոցների ընտրութեան մէջ։ Ներելի և անները՝ թոյլատրելի ու դատապարտելի, անհեթեթ ու խարդախ—ամէն միջոցների ձեռք են զարնում, թէկուզ իրանց ձեռքն էլ աղաստուէ։ Եւ այդպիսով գալիս հասնում են այն դրութեան, երբ, առաջի համաձայն, հէնց իրա՛նք լինելով իսկական գողերը, ստեղծում են իրարանցում և ուրիշների նկատմամբ պոռում՝ «բռնեցէք գողերին»։ Մի ճարպիկ հնարք իրանց տգեղ արարքները և իրանց թաքուն նպատակը հասարակութեան աչքից սքօղելու համար։ Մի հնամաշ գիւտ, որ, արդարև, արժանի է միայն գողերին, որոնք ուզում են խոյս տալ հալածանքից, մի գիւտ, որի տխմար իմաստութիւնը կամ խարդախ վարպետութիւնը կա՛նում է հեռուեալում — «Եղադրի՛ր ուրիշին, որ ծածկես քո՛ մեղքերդ»։

Եւ նրանք իրանց կարծում են անպատիժ, որովհետեւ, յիրաւի, ու՞մ են տալու նրանք հաշիւ իրանց գողանման ընթացքի մասին։ Պատմութե՞ան։ Հարկաւ, մեծ պատիւ կը լինէր նրանց վերաբերութեամբ կարծել, թէ պատմութիւնն իմանալու է նրանց անունները։ Այդ իրանք էլ գիտեն և այդ պատճառով պատմութեան դատավճռից երկիւղ չունեն։ Ուրեմն, հասարակութե՞ան։ Պէտք է, յիրաւի, միամիտ լինել ենթադրելու համար, որ այդ ասպետները հասարակութեանը «մարդու տեղ են դնում»։ Նախ, հասարակութեան առաջ նրանք ունեն մի զէնք, որ միշտ կարող է ծառայել, դէթ առժամանակեայ կերպով, պարբերաբար։ Այդ զէնքն է՝ դիմակ, որը ռանդեռանդ ներկելու համար—ժամանակի պահանջի համաձայն — նրանք հասել են կատարելագործ վարպետութեան։ Բացի այդ, ի՞նչ նշանակութիւն ու կարեւորութիւն ունի հասարակութիւնը նրանց աչքին։ Ստի՛ր այս մէկի մասին, զրպարտիր երկրորդին, հրեշ ներկայացուր երրորդին, և այդ բոլորը հասարակութիւնը կընդունէ հալած իւղի տեղ, որովհետեւ ի՞նչ գիտէ նա և ի՞նչպէս իմանայ, թէ որքան դրանք ստոյգ են կամ սուտ։ Եւ մինչև որ ճշմարտութիւնը երեւան գայ—և նա միշտ ուշ է յայտնուում — մաքիավէլիստ ու ջէզուիտ ասպետներն իրանց թունաւոր նետերով արդէն շատ զոհեր սիրուած կը լինեն պատերազմի դաշտի վրայ։ Իսկ երբ, հակառակ ամէն ստերի, ճշմարտութիւնը վերջապէս երեւան եկաւ...։ Է՜հ, ի՞նչ կայ. նրա՛ դէմ էլ կը ստեն։

Ուրեմն, էլ ի՞նչ է մնում, որին նրանք ստիպուած լինէին հաշիւ տալու և երկիւղով լցուէին ու կարմրէին ամօթից իրանց այդ տեսակ «յեղափոխական ու հայրենասիրական սխրագործութիւնների» համար։ Ի՞նչ է մնում...։ Ա՜հ, որքա՜ն միամիտ հարց, պարզամի՛տ իմ ընթերցող։ Ի՞նչ. մի բան, մի մեծ բան, մի սուրբ բան, որ պէտք է լինի հիմնքն ու պատկերը, ոյժն ու դատաւորն ամէն մարդկային գոյութեան, թէ՛ անհատական, թէ՛ հասարակական։ Եւ այդ բանն է՝ խղճմտանքն՝ ա՜ռ։

Բայց այդ մարդիկը խղճմտանք է՞լ չունեն։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

(Մեր աշխատակցէն)

ՆՈՐ ՐԱՑԽՍՏԱԳԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամսոյս 16—ը Գերմանական ամբողջ կայսրութեան համար մի նշանակալից պատմական օր էր։ Այդ օրն էր նշանակուած ռայխստագի համար նոր պատգամաւորների ընտրութիւնը. այդ օրը պիտի կազմուէր նրա նոր կազմը. այդ օրը պիտի յայտնուէր կուսակցութիւնների՝ ամիսների ընթացքում մղած «ընտրութեան կռիւ» (Wahlkamf) հետեւանքը։ Կայսրութեան եկող հինգ տարուայ օրէնսդրական շրջանի, այսպէս ասած՝ բովանդակութիւնը, նրա ներքին և արտաքին քաղաքականութեան սլաքների ուղղութիւնը պիտի մօտաւորապէս տրամագծուէր այդ օրը—միայն մի օրուայ մէջ։ Ուրեմն զարմանալի չէ, որ ամբողջ Գերմանիան այդ օրը — մանաւանդ երեկոյեան մինչև կէս գիշեր, երբ ընտրութիւնների հետեւանքը ելեքդրական արագութեամբ տարածւում էր էքստրա-թերթերով և հեռագրներով — եռման մէջ էր. ազգաբնակութիւնը միտքն ու ականջները սրած՝ տաք-տաք խօսում, դատում և տենդային հետաքրքրութեամբ կլանում էր իւրաքանչիւր լուր. կարճ՝ ամենուրեք տիրում էր ներվեօզ դրութիւն։ Այդ չէ միայն, այդ օրը ժողովուրդի օրն էր (Wahltag ist Volkstag)։ հինգ տարուայ մէջ միայն մի օր է նա անմիջապէս մասնակցում քաղաքականութեան արտայայտում իւր կամքը, իւր համակրանքն ու հակակրանքը, ցոյց տալիս քաղաքական իւր կարողութիւնը և իւր բարոյական ուժը քաղաքական գործերի մէջ։ Այդ օրն է նա կարողացել բարձրացնել իւր հսկային և դողդեցնող ձայնը այն բիրտ և վայրենի ուժի դէմ, որ հինգ ձիգ տարուայ ընթացքում գործադրել է նրա վրայ իշխող դասակարգը. այդ օրն է իմի ժողովել մասսայի յեղափոխական տարրերին, համայն մարդկութեան ցոյց տալու համար, թէ պատրաստ են նրանք ջախջախելու կապիտալիստական—բուրժուական կարգերի շղթաները և ուետելու սոցիալիզմի նոր աշխարհի կենսատու արշալոյսը...։

Այդ պատճառով էլ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը — սկսած պաշտօնական դիպլոմատներից և վերջանալով հասարակութիւնների երկու՝ բուրժուական և բանւորական դասակարգերով—իւր հայեացքը դարձրած է այժմ Գերմանիայի վրայ, ուշադրութեամբ հետեւում էր ընտրութեան կռուին և հետաքրքրութեամբ սպասում այդ կռուի հետեւանքին։ Հայութիւնն էլ պէտք է գիտակից լինի գերմանական և միեւնոյն ժամանակ ընդհանուր քաղաքական այդ խոշոր երեւոյթին, քանի որ արեւելեան խնդիրը մտնում է համաշխարհային քաղաքականութեան մէջ, քանի որ նոյն այդ

խնդրի, ասպէս ասած, կեանքն ու մահը կախուած է մեծ պետութիւնների մէջ քաղաքական գերիշխող ուղղութիւններից, իսկ Գերմանիան առաջնակարգ ձայն տուողներից է այդ աշխարհում. չէ՞ որ 61 յօդ. կնքուել է հէնց Բեռլինում՝ Գերմանիայի մայրաքաղաքում։ Նոյնպէս՝ որովհետև հայկական հարցի լուծման կամ, աւելի ճիշտ, առաջխաղացութեան վրայ ահագին ազդեցութիւն ունի գերմանական ռայխստագի կազմը—չէ՞ որ սոցիալիստ պատգամաւոր էդ. Բեռնշտայն էր, որ 2–3 ամիս առաջ, հարցապնդում արեց—, ուստի անհրաժեշտ է, որ հայ հասարակութիւնն էլ տեղեկութիւն ունենայ նրա նոր հիմնուող կազմի մասին։ Եւ վերջապէս՝ որովհետև Գերմանիայի սոցիալ-դէմօկրատ կուսակցութիւնը, ասպէս ասած, ուղեցոյցն է միջազգային սոցիալիզմի, ուստի իհարկէ հայ սոցիալիստ պիտի բնականօրէն նոյնպէս յայտնի լինի նրա գործունէութիւնը, ուժն ու շարժումը։ Մի ուրիշ անգամ էլ վերապահելով նկարագրելու սոցիալիստների զարմանալի եռանդուն և ուղղակի անձնուէր գործունէութիւնը՝ պրօպագանդան, որից մենք շա՜տ ու շատ բան ունենք սովորելու, և ժողովուրդի մասսայի քաղաքական ապշեցուցիչ հասունութիւնը, որից մեր՝ քաղաքականութեան մէջ խիստ բաբիկ "ինտելիգէնցիան" անգամ պիտի կարմրի, այժմ մի քանի խօսք միայն սոցիալիստների փառաւոր յաղթութեան և նորա ռայխստագի ֆրակցիաների այժմեան ուժի մասին։

Մի խօսք էր միայն, որ անսահման ուրախութեամբ և ներքին հպարտութեամբ արտասանում էր իւրաքանչիւր "կարմիր" ոգևորուած—"յաղթութիւն". այո՛, մեծ և փառաւոր յաղթութիւն ի պատիւ միջազգային սոցիալիզմի! Կարմիր դրօշի յաղթանակը կայծակնահար է արել բուրժական միւս բոլոր կուսակցութիւններին. մի քանի օր առաջ ամենայն եռանդով և մեծ յոյսերով մարտնչում էին նրանք ձեռք ձեռքի տուած այդ սոսկալի դրօշի դէմ, հազար ու մի տեսակ խայտառակ միջոցներով, զզւելի անուանարկութեամբ, կեղտոտ զրպարտութիւններով կռւում էին իրենց այդ ամենասարսափելի թշնամու դէմ, իսկ այսօր հիասթափուած, վերջին յոյսը կորցրած, երկաթէ իրականութիւնից ստիպուած խոստովանում են սոցիալ-դէմոկրատիայի "ահագին յաղթութիւնը" (Vossishe Zeitung), արտասուքով յայտնում "լիբերալիզմի անկումը Բեռլինում" և "ազատամիտ ձայների նուազումն ամենուրեք" (Berliner Tageblatt. երկուսն էլ մեր ազատամիտների կողմից նոյնպէս ամենայարգուած թերթեր են)։ Եւ իրօք. հէնց առաջին՝ գլխաւոր ընտրութեան ժամանակ, սոցիալիստները անց են կացրել 57 մանդատ, 26-ով աւելի, քան 1898-ին. բացի դրանից նրանք մասնակցում են 89 կրկնաքուէարկութեան (Stichwahl), որից "մեծ մասը խիստ յուսալից է և նոյնիսկ ապահով" (Vorwärts)։ "Մեր դէպի առաջ շարժման դիմաց ոչ մի կուսակցութիւն չէ կարողացել կանգ առնել, ասում է Vorwärts, — սոցիալ-դէմոկրատների կենտրոնական օրգանը։ Ազատամիտները փշուր-փշուր են եղել. ցենտրումի պատերը խորտակելով, յաղթութեամբ ներս ենք մտել, պահպանողական ագրարները յետ են նահանջել մեր դիմաց. իսկ ազգային-ազատամիտներին ցած ենք գլորել և կճնշենք նրանց նպաստաւոր կրկնաքուէարկութիւններում"։ Եւ դա չափազանցութիւն չէ բոլորովին. Berliner Local-Anzeiger, որի "ուղղամտութեան" վրայ ոչ մի բուրժուա չի կասկածի, համարեա նոյնն է խոստովանում. "Ագրարները պարտութիւն են կրել. ազատամիտ կուսակցութիւնները ջարդւել են. սոցիալ-դէմոկրատիան աճել է... Ռիխտէր նոյնիսկ (ազատամիտների "հսկան"!) կրկնաքուէարկութեան է իջեցրած, և թերևս ցենտրումի ու ազգային-ազատամիտների օգնութեամբ միայն կարողանայ իւր մանդատը պահպանել"։ Այժմ էլ թւերով խօսենք. ազատամիտներից, որոնց թիւը 43 էր, ոչ մեկը չէ ընտրուած. 53 մանդատ ունեցող ազգային ազատամիտները անց են կացրել միմիայն 6-ը. ցենտրումը 106 պատգամաւորի փոխարէն այժմս ունի միմիայն 60, են։ "Կայսրութեան գլխաւոր քաղաքները — շարունակում է Vorwärts — համարեա բոլորն էլ մերն են։ Գիւղօրայքում հսկայական առաջադիմութիւն ենք արել։ Կաթոլիկ բանւորները խիստ եռման մէջ են"։ Իհարկէ իրաւունք ունի այդպէս յայտարարելու. Բեռլինի հինգ շրջանում էլ սոցիալիստներ են ընտրուել, իսկ Վեյսֆորդում կրկնաքուէարկութեան ժամանակ հաւանական է կընտրուի կրկին սոցիալիստ։ Կաթոլիկ բանւորների բնակչութեան երեք շրջաններում ձայների թիւը աւելացել է 52800-ով! Բայց խիստ առասպելական է սոցիալիստների յաջողութիւնը Սաքսոնական թագաւորութեան մէջ. 23 ընտրողական շրջաններից 18-ում արդէն ընտրուած են սոցիալիստներ, իսկ մնացածներն էլ ամենամեծ հաւանականութեամբ նոյնպէս կանցնեն նրանց ձեռք. "Սաքսոնիան այժմ սոցիալ-դէմոկրատական տէրութիւն է!" Այդպիսով սոցիալիստները*) կազմում են Գերմանիայում այժմ ամենաուժեղ կուսակցութիւնը (57) ցենտրումից յետոյ ("սև", կաթոլիկ-պապական կուսակցութիւնը 60). յետոյ արդէն գալիս են՝ պահպանողականները (21), ազգային-ազատամիտները (6), իսկ ազատամիտ կուսակցութիւնները փայլում են իրենց բացակայութեամբ։

Սակայն սոցիալիստների այդ յաղթութիւնը չէ միայն, որ զարհուրեցնում է կառավարութեան և դրա սիւներին՝ բուրժուա կուսակցութիւններին, այժմեան սոցիալական և տնտեսական անանկ և մահաբեր կարգերից, քաղաքական՝ այսպէս ասած՝ դասակարգապաշտական շահերից և զզւելի շօվինիզմից յամառօրէն կառչած այդ տզրուկներին, այլ և սոցի...

*) Ընտրութիւններու վերջնական արդիւնքի համաձայն՝ կեդրոնի կաթոլիկներէն եռքը(100). Սօսիալիստները շահած են՝81. կայսերականները՝19 ևլն.
Ծ. Խ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ 2

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ՌԷՔԼԻՒՍ-ի

թարգմանեց Ֆրանսերէնէ

Ա. Տ-եան

ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԷՎՕԼԻՒՑԻԱՆ (ԲԱՐԵՇՐՋՈՒՄ)

Մարդկութիւնը ևս, ինչպէս մատաղ ծառը, ընդունակ է զարգացման, բայց մէկը և միւսը կը հնազանդին որոշ օրէնքներու, իւրաքանչիւր երկուքին զարգացումը ունի բնական սահմաններ։ Մեր իմացականութիւնը չի կրնար ըմբռնել բացարձակ ճշմարտութիւն, մեր քմահաճոյքը ստեղծել բացարձակ գեղեցկութիւն, մեր սիրտը բացարձակ բարութիւն, մարմինը չի կրնար վայելել բացարձակ կեանքը, նմանապէս մարդկութիւնը երբեք չպիտի հասնի բացարձակ ազատութեան։ Ծովերու աւազակը, որ չի ճանչնար ո՛չ ընկերութիւն, ո՛չ օրէնք, որ կը թիավարէ անսահման ովկիանոսի վրայ, ջուրերու տակ անդունդ, գլխու վրայ երկինքը, ամբողջովին ազա՞տ է արդեօք. արտաքուստ միայն, որովհետև անիկա ենթակայ է ալիքներու և քամիի զօրութեան։ Երջանիկ է, եթէ չընայած փոթորիկն ու ալիքներու հարուածները, կը յաջողի անվրդով պահել նաւը լաւ ուղղութեան մէջ, խորշելով վիմունքներէն և եթէ հնազանդի կողմնացոյցին. բայց վա՜յ անոր, եթէ զզուած է ամեն ուղղութենէ և ամեն իշխանութենէ, անիկա ալիքներու խաղալիքը կը լինի, յանուն մի ցնորական ազատամիտ վարդապետութեան։

Մեզ հարկաւոր է յարատևօրէն հաշուի առնել ոյժերը, որ մենք ունինք, պայմանները՝ որոնց դէմ մենք պէտք է կռւինք, մարդիկը՝ որոնց մէջ մենք պիտի ապրինք։ Ցոյց տրուեցաւ արիւնահեղ կռւով 1789-ին, ո՞ր է այն անջրպետը, որ կը բաժնէ իտէալը իրականութենէն։ Յանուն պատրիչ և վերացական վարդապետութեան մը չուզեցին տալ անհատական ազատութեան ինքնազարգացման ժամանակը, այլ ոյժով ժողովուրդին ընդունել տուին։ Այդ սկզբունքի համեմատ ամեն ինչ փոխուեցաւ պետութեան և ընկերութեան մէջ, և մարդկային "ազատութեան աստուածուհին" դարձաւ աւելի մոլեռանդ, քան երբեք հաւատացող եղած էր դէպի իր կուռքը։

Եւ հետևանքնե՞րը "Ժողովուրդի մը մէջէն, որ քանդեց թագաւորութիւնը, ստեղծուեցաւ ոյժ մը, աւելի զօրաւոր և աւելի բռնապետական քան թագաւորինը" (Տոքվիլ)։ Ազատութեան զգացական ցնորքը չիրականացաւ և գերութիւնը չանհետացաւ։ Ազատութեան առաջին տարին տևեց միայն մէկ օր։ Միանգամ ևս մոռացան ճշմարտութիւնը, որ Սէն-Սիմօն հետևեալ կերպով յայտնած էր "Ազատութիւնը ո՛չ նպատակ մընէ ո՛չ միջոց մը, անիկա յաջորդական զարգացման հետևանք է։"

Ազատութիւնը ուրեմն կախուած է պատմական պարագաներէ, որոնց մէջ կապրինք. ժամանակը, որ կը յաջորդէ, միշտ արդիւնքն է անոր, զոր կանխած է։

Մեր պատերազմները, մեր կիներու վիճակը, մեր պատժական օրէնքը, պարզօրէն կը յայտնեն որ բարբարոսական բնազդները դեռ կը կառավարեն մեզ։ Եւ մինչ դեռ մենք հազիւ կը նշմարենք քաղաքակրթութեան արշալոյսի ծագումը, կը համարձակինք հաւատցնել թէ՝ ազատութիւնը պիտի անհետացնէ ամեն անգթութիւն և ամեն եսականութիւն։

Կը մտածեն մոգական գաւազանի մը հարուածով կարողանալ փոխակերպել մարդկութիւնը աւելի մաքուր արժանիքով արարածներու, մինչդեռ ամեն տեղ մեր չուրջը, գոյութեան սարսափելի կռիւը ցոյց կուտայ մեզ թէ մենք հազիւ դուրս եկած ենք մեր նախնեաց անասնութենէն։ Իբր թէ մի սերունդ որ մեծցած է թշուառութեան և ճնշման մէջ, կընայ միայն մէկ անգամէն ազատիլ իր մոլութիւններէն և ստրկութենէն։ Իբր թէ կարելի ըլլար պատուաստել ազատութիւն ու անկախութիւնը բռնապետութեան և ստրկութեան դարերու մէջ։ Վնասակար մարդիկը, անոնք կարող են սպանել, բայց բնաւորութիւնները ուրիշ բանով չեն կարող բարեփոխուիլ, բայց եթէ նպաստաւոր հանգամանքներով, զանոնք դնելով երկար տարիներու ընթացքի և աւելի լաւագոյն ընկերական միջավայրի մը մէջ։

(Շարունակելի)

ալիքի ճգնարտութեան իրողութիւնն է, որ դողացնում է նրանց սիրտն ու միտքը, որովհետև նախատենում են իրենց դասակարգային իշխանութեան և էգոիզմի փլչելու մօտալուտ վայրկեանը. իրողութիւն, որ հիմնուած է ոչ թէ գիտական սկզբունքների վրայ, քանի որ նրանց դասակարգային նեխուած միտքն անկարող է ըմբռնել այդ, այլ պարզ՝ թւերի վրայ, որոնց դիմաց si — գիտական հիմունքները, ամենասուր սոփեստութիւններն անգամ ցիրուցան են լինում։ Եւ իրօք. այս հինգ տարուայ ընթացքում*) սոցիալիստական ձայների աճումը հսկայական է, բառիս ամենաճիշտ իմաստով. Էսսէնում ձայների թիւը 4400, դարձել է 22 000! Դուիսբուրգում՝ 7800-ից՝ 25000! Բօխումում ձայների թիւն աճել է 18000-ով! Մայն Բերլինում 100000 սոցիալիստական ձայն է աւելացել. աշխարհահռչակ հռետոր Բեբէլ, որ Համբուրգում (արևելք) 78 թ. ստացել էր 18500 ձայն, այս անգամ ընտրուել է 22050 ձայնով։ Սոցիալիստ կուսակցութեան վրայ աւելացել է տասայժամ ընդամենը 422545 ձայն, իսկ ամբողջ Գերմանիայում գաղտնաւորապէս 3 միլիոնի կհասցրնենք» (Vog. Org.)։

Ձայների աճում! բայց ի՞նչ են արտայայտում այդ ցամաք թւանշանները, եթէ ոչ սոցիալիստական գաղափարի աճումը, մարդկութեան սեռը փրկող այդ գաղափարի իրականացման համար գիտակից պատերազմողների և անձնուէր զինուորների թւի աճումը! եթէ ոչ այդ անարատ և հզօր գաղափարի ներքին ճշմարտութիւնը! Բանտերդ դարի ընկիզը Գերմանիայի երկրի վրայ մրրիկից հողմ է պատրաստում բուրժուազիայի համար, իսկ նրա պայծառ երկնքի վրայ նոր կեանքի ժպտուն արշալոյսի առաջին ճառագայթները փայլեցնում բանուոր դասակարգի համար! Եւ ոչ միայն Գերմանիայի, այլ և ամբողջ մարդկութեան փրկութեան և ազատութեան համար! «Այն թւերը, որոնք յայտարարում են գերմանական սոցիալ-դեմոկրատիայի զօրանալը, զարթեցնում և ամրացնում են բոլոր ժողովուրդների և բոլոր ազգերի միլիոնաւոր թշուառների մէջ վերջնական յաղթութեան յոյսը։ Սոցիալիստական ձայների գումարը գերմանական ազգի կուլտուրայի պատիւն է, որը ոչ թէ նախանձ և ատելութիւն, այլ զարմանք և հպարտութիւն է գրգռում բոլոր ազգերի բանուորների մէջ»։

*) 1898—1903. համաձայն կայսրութեան օրէնսդրութեան (Reichsverfassung) իրաքանչիւր ռայխստագի գործունէութիւնը տեւում է 5 տարի, որի դէմ իդէպ ասած սոցիալիստները դուրս են եւ պահանջում 3 տարի դարձնել այդ ժամանակաշրջանը։

Այո՛, այսօր կուլտուրական բոլոր երկրների սոցիալիստները ներքին անհամբերութեան ուրախութեան զգացմունքով ծափահարում են իրենց զինակիցների յաղթութիւնը Գերմանիայում, շնորհաւորում նրանց. շարքերի բազմացումը և փառաբանում նրանց անձնուէր գործունէութիւնը։ Մենք հայ սոցիալիստներս էլ ուրախանանք գաղափարակից մեր ընկերների հետ և, խառնելով մեր ձայնը նրանցի հետ, գոչենք՝ «Եկցէ միջազգային սոցիալիզմ»!

Բերլին, 20 յունիսի

Ս. Կպսեան

ՄԻ ՀԶՕՐ ՁԱՑՆ

(շարունակութիւն)

—o—

Այս հակիրճ յառաջաբանից յետոյ՝ անցնենք ա. ժամ Դէորգ Բրանդէսի յայտնի առնախօսութեան, որի թարգմանութիւնը կը տանք ընթերցողներին, շատ չնչին կրճատումներով։

Տիկիններ և Պարոններ!

Որ Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը ինձ պատիւ է արել՝ հրաւիրելով այս երեկոյ առնախօսելու՝ ես այդ պարտական եմ այն հանդամանքին, որ մէկն եմ եւրոպական այն գրողներից, որոնք իրենց ձայնը բարձրացրին Հայաստանի համար, առաջին անգամ փորձեցին հասարակաց ուշադրութիւնը դարձնել նոր ժամանակի ամենասարսափելի և քստմնելի եղերերգութեան վրայ։

Ես հակումն չունիմ՝ մի սոսկական գրողի խօսածները չափից աւելի գնահատելու, և շատ լաւ գիտեմ, որ բարձր քաղաքական խնդիրներում վճիռ արձակելը իշխանաւորների ձեռքին է։ Սակայն նոյնիսկ իշխանաւորները մեր օրերում՝ ստիպուած են զօրեղ և միահամուռ կերպով արտայայտուած հասարակաց կարծիքի վրայ ուշք դարձնել. ուստի արժէ այն տեսակ հասարակաց կարծիք յարուցանել ամէն երկիրներում, մանաւանդ Գերմանական պետութեան մէջ։

Դուք բոլորդ կիմանաք, թէ՝ վերջին տասը տարիները Ցաճկա-Հայաստանն այնպիսի սարսափների ասպարէզ դարձաւ, որ վաւերական տիեզերական պատմութիւնը ամենաբիրտ ժամանակներից հաղիւ հաղորդելիս լինի։ Նախքան մեր ականատես լինելը՝ ոչ ոք չէր կարող հնարաւոր համարել, որ մի ամբողջ բնակչութիւն բնաջինջ անէին, տանջանքների և խմբական կոտորածների ենթարկէին։ Հարիւրհազարաւորների արիւնը երկինք է կանչում։

Դիտեմ որ Ցաճկաստանը Գերմանիային բարեկամ պետութիւն է։ Որ այդ այդպէս է՝ տաճիկ կառավարութեան ձեռքերն ազատ թողնուեցան։ Սուլթանի անձնաւորութեան մասին ոչ մի վանկ չեմ խօսիլ։ Սակայն այդ բարեկամութիւնը, որ նրա երջանկութիւնն է, չէ կարող մարդկայնութեան միջնորդներին արգիլել՝ Գերմանական հասարակութեան առաջ դուրս գալու։

Ունդարիան ցեղակցութեամբ և աւանդութիւններով Ցաճկաստանի հետ դարերից իվեր բարեկամ է. սակայն և այնպէս Հայկական Դատի անվեհեր նախանձախնդիր Պիէր Քիարին ուշադրութեամբ լսեցին Բուդապէշում, երբոր մօտ օրերս՝ դեկտեմբերի միջերքին լուսաբանում էր Հայաստանի նորագոյն պատմութեան իրողութիւնները։

Գերմանական ժողովուրդը Ցաճկաստանից շատ և շատ հեռու է, քան թէ մահմեդական ժողովուրդը, և իբրև ամբողջութիւն՝ անհունապէս հզօր։ Հայկական Դատի համար Գերմանիայում հասարակաց կարծիք զարթուցանելայժմ գուցէ վճռողական կշիռ ունենար։

Եթէ Հայերը ուրիշ ոչինչ չունենային իրենց համար՝ բայց եթէ իրենց դժբախտութիւնը, դժուար կը լինէր մերժել՝ նրանց ցաւակցութիւն ցոյց տալու։ Նրանք այնպիսի բաներ են կրել՝ էլ չենք ասում թէ անկարելի է նկարագրել՝ որ ունկնդիրները ականջները կը փակեն։ Ասում են 300000 կեանք են մարել, մասամբ բռնութիւններով, մասամբ սովից և ցրտից. և այս չնչին տպաւորութիւն է թողնում, երևակայութեան կարողութիւնը չի կարողանում շարժել։

Ինչ օգուտ եթէ ասենք, որ, օրինակի համար, 1894 թ. Օգոստոսին Մուշի մօտակայ գիւղերում այնպիսի ընդհանուր կոտորած տեղի ունեցաւ, որ երեք շաբաթ տևեց, որ՝ արք, կանայք, երեխայք, առանց խտրութեան, կոտորուեցան. որ կանանց մեռնելուց առաջ լկում էին, որ մերթ 200, մերթ 300 կամ 400 կանանց՝ առաջ զինուորներին էին անձնում, նախքան սուսերներ և սուիններով սպանելը։

Ինչ օգուտ եթէ հաղորդենք այն, ինչ որ մի Գերմանացի ճանապարհորդ տեղնի տեղը իմացել է։ Կենդրանցում Քիւրդերը խօսք են տուել, որ հինգ տարեկանից վեր բոլոր իգական սեռի պատկանողներին բռնաբարեն *)։ Կամ եթէ ասենք, մի ուրիշ տեղ վաթսուն երիտասարդ տիկիններ և աղջկերք մի փոքրիկ եկեղեցու մէջ փակել են, զինուորներին յանձնել և վերջապէս կոտորել։ Արեան վտակ է հոսել եկեղեցուդռան տակից։

(շարունակելի)

*) Paul Rohrbach կովկասից մինչև միջերկ. ծովը, էջ 74

ՇԱՐԺՈՒՄԻ «ԱՍՊԵՏԱՆ»

—o—

Վերջին տարիներս, ցեղափոխութեան անկումի շրջանին մէջ, արտասահմանի հայութիւնը՝ շընորհիւ նորածագ հրապարակագիրներու՝ գեղեցիկ պատեհութիւնը ունեցաւ դէպի զարգացում, կամ ըսենք, դէպի դաղափարի անբարոյականութիւն խոշոր քայլ մը արնելու։ Այդ հրապարակագիրներէն հասարակութիւնը չէր կրնար դաղափարական սնունդ առնել, քանի որ հանրային կարծիքի այդ ինքնակոչ առաջնորդները՝ հոգիով ու մտքով ապիկար՝ կոչուած էին իրենց տափակ մտքի ճգճիմ արտադրութիւնները իբր մտաւորական սնունդ հրամցնել հայ հասարակութեան և խօսելու այնպիսի հասարակա՛ն երևոյթներու մասին, որոնք մեկնաբանելու համար հարկաւոր է գիտական ուսումնասիրութեան բովէն անցնել ատոնք։

Բայց մեր կողմէ ամենամեծ միամտութիւն պիտի ըլլար մեր հրապարակագիրներէն պահանջել, որ ինչպէս հայկական կեանքի մէջ երեւան եկած երևոյթները՝ նոյնպէս ալ քաղաքական կազմակերպութիւններու զարգացման յաջորդական շրջանները բացատրէին արդի գիտութեան մատակարարած անսխալ միջոցներով։ Ուստի և զարմանալի չէ՛ որ պուլ՝ կարտհայ մամուլի մէկ ներկայացուցիչը՝ պ. Վարդօ, հետևելով իր դրացի դասական ոգէտ խրմբագրին, «Շարժումի» վերջին թիւերուն մէջ գրչի ծայրով չոշափեր կարդ մը հարցեր և հանդէր այնպիսի անհեթեթ եզրակացութիւններու, որոնք զինքը կը դասեն մեր ակնարկած հրապարակագիրներու տխուր շարքերուն մէջ։ Տրամադրուած այդ տողերը, որոնք վերէն եկած mot d' ordre-ի մը հետևանք են, մեղի համար անակնկալներ չէին և շատ բան կը պարզեն լուելեայն։ Այդ տողերուն մէջ պ. Վարդօ Հնչակեանութեան դամբանականը կը կարդայ՝ անշուշտ կարծելով որ իր «երկարուն բացակայութեան» միջոցին ստացած «փորի ցաւը» կը բնայ դարմանել այդպիսի զառանցանքներով։

Հնչ. Կուսակցութիւնը լինելով ցեղ. կազմակերպութիւն մը՝ ունի քաղաքական և տնտեսական պահանջներու իր ծրագիրը և մինչև այդ պահանջներու լիակատար իրագործումը հայկական կեանքի մէջ՝ ան կը մնայ կանգուն և չի մեռնիր — որքան ալ այդ բանը փափաքելի ըլլայ իր ոխերիմ թշնամիներուն —, քանի որ իր ծոցին մէջ կը սնուցանէ այնպիսի՛ սնկեղծ ու մաքուր ցեղ. ոյժեր, գործիչներ, որոնց գրաւոր վկայութիւնները հրապարակելու հարկին տակ կը գտնուին Վարդօներ՝ երբ կը տեսնեն որ իրենց անկապ ու անիմաստ բացատրութիւնները անզո՛ր են յեղաշրջելու իրենց անձին նկատմամբ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող աննպաստ կարծիքը։

Ընդհակառակը, Հնչ. Կուսակցութիւնը ունենալով գործունէութեան շատ ընդարձակ Ծրագիր մը՝ առիթը պիտի ունենայ արձանագրելու մահը կարդ մը դիրաուող ցեղ. մարմիններու», որոնք թէ՛ իրենց հակասութիւններով լի ծրագիրներովև թէ ցեղ. բարոյականով պ. Վարդօին «մեռելա» երևակայած կուսակցութեան հետ բաղդատութեան անդամ չեն կրնար դրուիլ։

Երբ քաղաքական ոևէ կու-

սակցութիւն կը հանի իր շարադրման այնպիսի մէկ ասիճանին, որ իր պրոպականտայի ու գործունէութեան շնորհիւ շահած դիրքովը կըսկսի զօրեղապէս ազդել հասարակական կեանքի վրայ՝ ահա ա. դ շրջանին մէջ ներս կը սպրդին անդոյն ու անպէտ տարրեր, որոնք կը ջանան իրենց սեպհական միջավայրի հայեացքները, սկզբունքները տիրապետող դարձնել կուսակցութեան մէջ և ստեղծել գործունէութեան նորա-նոր հոսանքներ։ Եւրոպ. քաղաքական կուսակցութիւններու կեանքէն բազմաթիւ օրինակներ կը բերնանք թուել հոս ապացուցանելու համար մեր այս հայեցակէտի ճշմարտութիւնը։ Դեռ երկու երեք տարի առաջ էր որ ֆրանսական սոցիալիստ կուսակցութիւնը տեսնելով որ իր հիմնական սկզբունքներուն վասնզ կըսպառնան սոցիալիստական վերարկու հագած կարգ մը տնուղջ. բուրժուաներ՝ վճռական քայլ մը առաւ արտաքսելով դանոնք իր շարքերէն։ Եւ այսօր, ան՝ իր բուն հողին վրայ կանգնած՝ աւելի զօրեղ, նպատակայարմար ու սիստեմաթիք գործունէութիւն մը ունի որքան ալ իր կուսակիցներու թիւը նուազած ըլլայ. որովհետև, պէտք է գիտնալ որ կուսակցութեան մը զօրութիւնը ատոր անդամներու քանակէն չի չափուիր՝ այլ անոնց որակէն։ Միևնոյն երևոյթը տեղի ունեցաւ, դեռ անցեալները, պուլկար սոց. կուսակ. եան մէջ ալ։

Այսպիսի երկպառակութիւններ ո՛չ թէ կազմակերպութեան մը ոյժերը չլատելով զայն դէպի անկում կառաջնորդեն, այլ, ընդհակառակը, այդպիսի վիրաբուժական գործողութիւններ Յեղ. Մարմնին ոյժերը վերանորոգելով՝ միջոց կուտան անոր շեշտակի ու աշխոյժ գործունէութիւն ունենալու։

Այս ընդհանուր տեսութիւններէն վերջը փութանք պ. Վարդօի չօշափած խնդիրներու մասին քանի մը դիտողութիւններ ընել և փակել մեր յօդուածը։

Նախ եւ առաջ դիտել պիտի տանք պ. Վարդօին որ՝ իբրեւ ներկայացուցիչ մրցակից կուսակցութեան մը՝ չափազանց անքաղաքագիտական քայլ մը կառնէ հրապարակաւ Հնչ. Կուսակցութեան վերագրելով այնպիսի արարքներ, որոնք պարզ անհասաներու նախաձեռնութեան արդիւնք են։

Այդպիսի ընթացք մը Ալֆարիսսի մը կողմանէ հասկնալի է. բայց երբ հրապարակի վրայ Յեղափոխականի եւ հրապարակագրի կրկնակի կոչումը ունենալ յաւակնող մէկը այդտեսակ թեթեսօլիկ վերաբերում մը կունենայ դէպի Հնչ. Կուսակցութիւնը՝ մենք, մեր անհրաժեշտ պարտականութիւնը կը համարինք հրաւիրել զայն, որ պատշաճութեան սահմանին մէջ մնայ։

Հնչ. Կուսակ.ը բնաւ չէ՛ խուսափած իրգործերուն պատասխանատուութիւնը ստանձնելէ. եւ ներկայ տագնապալի շրջանի մէջ ալ՝ կը շարունակէ ան ըլլալ յանդուգն ու անկեղծ եւ իր ներքին գործերու մասին ըրած կարգադրութիւններուն համար հաշիւ կուտայ միմիայն իր Ընդհ. Ժողովին։ Պ. Վարդօ աւելի լաւ կընէր եթէ իր բարի խորհուրդները վերապահէր իր կուսակցութեան։ Մենք ունինք մեր մէջ բաւական արժանաւոր ու կարող ոյժեր, որոնք թէ՛ իրենց փորձառութեամբ եւ թէ՛ յեղափոխ. գիտակցութեամբ իսկական են յաջողութեամբ կատարելու իրենց վրայ ինկած պատասխանատու գերը եւ բնաւ պէտք չեն զգար դասեր առնելու իրենց նախկին աշակերտներէն։

Պ. Վարդօն բարոյապէս ինկած ու մեռած կը հռչակէ Կուսակցութիւն մը, որ քաջութիւնը ունեցաւ իր շարքերէն արտաքսելու եւ հրապարակաւ նշաւակելու կարգ մը պորտաբոյծներ, որոնք անձնական շահագործումի առարկայ ըրած էին Յեղ. գործը։ Երբ կազմակերպութիւն մը թոյլ չի տար որ իր ծոցին մէջ սնունդ առնեն ատոր ու գարշելի տիպեր, այդ մարմինը ամէն ժամանակ արժանի է ընդհանուրի քաջալերութեան ու համակրանքին։ Հնչ. կուսակ.ը երբէք չի կրնար պատասխանատու նկատուիլ իր անունով գործուած զեղծումներուն, որովհետև ատոր հեղինակները այսօր վտարուած են իր շրջանակներէն եւ յանձնուած հայ հասարակութեան անողոք դատաստանին։

Մենք հաւակնութիւնը չունինք հռչակելու բոլոր հնչակեանները մէյ-մէկ հրեշտակներ։ Կընդունինք որ Հնչ. կազմակերպութեան այլ եւ այլ խաւերուն մէջ սպրդին շառլատաններ ու խարեբաներ, բայց այդ իրողութիւնը մեր կազմակերպութեան բարոյականին արատ բերելու բնաւորութիւն չունի, այլ ան կապացուցանէ հայկական կեանքի ո՛ր ասպարէզն ապականուած ըլլալը, որ ծնունդ կուտայ այդպիսի այլասերուածներու։

Ինչո՞ւ սակայն պ. Վարդօն այնքան կը հեռաքրքրուի հնչակեան «քրսան հազարներ» ով եւ — եթէ այնքան նախանձախնդիր է Յեղ. գործունէութեան մաքրութեան — իրեն նեղութիւն չի տար քիչ մը լուսաբանելու հասարակութիւնը Կովկասի մէջ հաւաքուած հարիւր հազարաւոր ռուբլիներու մասին։

Պ. Վարդօն կրնա՞յ հրապարակաւ խոստովանիլ ձեռքը խղճին վրայ դնելով, որ իր կուսակցութիւնը այնքան խիստ զանուած է իր անարժան անդամներուն նկատմամբ, որքան Հնչ. Կուսակ.ը։

«Ամէն բան մեր մէջ խեղդելու» քաղաքականութեան հետեւողները աւելի կը շահին եթէ քիչ մը համեստ ըլլան եւ փոխանակ ուրիշի աչքին փուշը մատնանիշ ընելու՝ իրենց աչքին գերանը հանեն։

Հնչակեանները իրենց հակառակորդները եւ մրցակիցները ոչնչացնելու համար պ. Վարդօի երեւակայած «սիստէմ» ին չեն հետեւած ու չեն ալ հետեւիր. եւ եթէ այդ տեսակ սիսդէմ մը գոյութիւն ունենար՝ Հնչակեանները ատիկա նախ եւ առաջ պիտի գործադրէին Դաշնակցականներուն դէմ 1891-ին։ Կրնա՞յ «Շարժում»ի խմբագիրը այդ զառանցանքները հաստատող փաստ մը հրապարակել։

Մեր հակառակորդները միանգամընդմիշտ պէտք է գիտնան որ այդ տեսակ սօփեստութիւններով չէ որ պիտի յաջողին մեզ վարկաբեկ ընել հասարակութեան առջեւ եւ իրականացնել տարիներէ իվեր իրենց փայփայած նպատակը — Հնչակեանութեան ոչնչացումը։ Ընդհանրապէս, մեր թշնամիներուն այդ ջեղուխական վարմունքը մեզի տխիթ պիտի ընծայէ դիմակազերծ ընելու այն տխրագէմ ասպետները, որոնք զուրկ ո՛եւէ արժանաւորութենէ, որով կարենային հասարակութեան առջեւ հեղինակութիւն ու կշիռ ստանալ, իրենց բան գործ ըրալ են կուսակցական կիրքերը յուզել եւ այդպիսով յեղափոխական ազնիւ տարրերու մերձեցումին արգելք ըլլալ։ Որքան ալ մենք համակիր ըլլայինք Յեղ. համերաշխ գործակցութեան եւ հակառակ՝ կուսակցական վիճաբանութեան այս եղանակին, այսու ամենայնիւ չէինք կրնար լռութիւն մնալ այն տխուր փաստին առջեւ, որ Ալֆարիսներու վատակամ դափնիները սկըսած են խանգարել կարգ մը «յեղափոխականներու» քունը։

Մենք կը բաղձայինք որ մեր հակառակորդները փոխանակ ժողովուրդը անբարոյականացնելու եւ ատոր միտքը պղտերելու բնոյթը ունեցող ճղճիմ խնդիրներ յուզելու հրապարակի վրայ՝ փոխադրէին վիճաբանութիւնը Ծրագրային սկզբունքներու հողին վրայ եւ յուզէին միեւնոյն ատեն յեղափոխական տաքտիքի վերաբերեալ հարցեր, որոնց լուսաբանութենէն անվիճելիօրէն պիտի օգտուին ո՛չ միայն Հայ Յեղ. Ժողովուրդը, այլ նոյնիսկ զայն առաջնորդելու կոչումը ունեցող կարգ մը «զեկավարիչներ»։

Հայ Յեղ. մամուլը պէտք չէ կուսակցական զրաւելի կիրքերու ասպարէզ դառնայ. անոր կոչումը շատ աւելի վեհ եւ բարձր է։ Անոր նպատակն է տարածել Յեղ. Դաղափարը, բացատրել հայ ժողովրդին իր ներկայ անտանելի վիճակին իսկական պատճառները, ցոյց տալ անոր այդ դրութենէն ազատելու վճռական ու կըսրուկ միջոցները, բարձրացնել անոր բարոյականը, որպէսզի Յեղ. Գործունէութեան հետեւանք եղող անխուսափելի ձախորդութիւնները չի տկարացնեն անոր կռուող ոյժը, մէկ խօսքով, տալ հայութեան յեղափոխական առողջ դաստիարակութիւն մը, որ ազատութեան ձգտող ժողովուրդի ամենամեծ առաքինութիւնն է։

Համոզուած ըլլալով որ միմիայն այս եղանակով կրնանք հաւատարմաբար ու օգտակարապէս ծառայել Հայ տառապող ժողովրդի դատին՝ մենք բոլորովին անուշադիր չթողլով մեր հակառակորդներու կողմէ սրձակուած թունալից սլաքները՝ կընթանանք մեր դծած ուղիով, մինչեւ որ յաջողինք իրագործել Հնչակեան Ծրագիրը—Հայ ժողովրդի քաղաքական եւ տնտեսական լիակատար ազատութիւնը։

Կապար

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԲՐՕՆԻԿ

Քանի մը օր առաջ Պուլկարիան Ծանուցագիր մը մատուցած Եւրոպ. Մեծ Պետութիւններուն՝ հրաւիրելով անոնց ուշադրութիւնը Թուրքիոյ ընթացքին եւ զինուորական պատրաստութիւններուն վրայ։

Միւս կողմէ Թուրքիան կը շարունակէ Պուլկ. սահմանագլխին վրայ կեդրոնացնել զինուորական ահագին ոյժ. մինչդեռ Պուլկարիան, զէթ առերեւոյթս, ապագայի պատահականութեանց առջեւ պատրաստ ըլլալու համար ուեւէ լուրջ ձեռնարկ ընելէ հեռի է։

Մօտոլուտ սնդհանուր աղէտի մը հեռապատկերը Պուլկարիոյ ժողովուրդը մատնած է անորոշ կացութեան մը եւ երկրին տնտեսական կեանքը զգալի կերպով խանգարուած է։

Հակառակ սակայն այս երկիւղալից նշաններուն՝ քաղաքական ներկայ պայմանները Թուրքիոյ եւ Պուլկարիոյ մէջ զինուորական ընդհարում մը հաւանական ընծայելէ հեռի են։ Թէ ինչո՞ւ. կը ցաւինք որ այդ մասին երկարօրէն բացատրութիւն տալ թոյլ չի տար մեզ «Վերածնութիւն»ի մէջ մեզ վերապահուած համեստ բաժինը։ Միայն աւելորդ չենք համարիր դիտել տալ որ մասնաւոր աղբիւրէ մեր ստացած ստոյգ տեղեկութիւնները կուգան հաստատել այս խնդրոյ մասին մեր ունեցած կարծիքը։

Որպէսզի Թուրքիոյ մէջ կատարուած գործառնութիւն մը թրքական գրոյցը կրէ՝ անպատճառ պէտք է որ կաշառքը իր առատ բաժինը ունենայ ատոր մէջ։

Անշուշտ մեր ընթերցողները կը յիշեն որ տակէ բաւական ժամանակ առաջ Եւրոպական առաջնակարգ դրամական հաստատութիւնները — որոնց գլուխը կանգնած է Թուրքիան անխնայ կերպով շահագործող տգրուկ Պանք-Օթոմանը—կը ջանային Թուրք պետութեան պարտքերուն միացումը կատարել։ Այս մասին ֆրանսական արդի ելեւմտական նախարար Ռուվիէն ընդարձակ ծրագիր մը կազմած էր որ քիչ փոփոխութիւններով ընդունեցաւ Թուրք կառավարութենէն։

Բանակցութիւնները շատ երկար տեւեցին, բայց Թուրքիոյ դժուարահաճ ըլլալուն պատճառները պէտք չէ վերագրել Թուրք պետական անձնաւորութիւններու երկրին շահերուն աւելի նպաստաւոր կարգադրութիւն մը ձեռք բերելու միտումին։ Ինչպէս գլխաւոր առարկան հրամցուելիք պատառին չափը որոշելուն վրայ էր եւ վերջապէս համաձայնութիւնը չուշացաւ գոյանալ։ Եըլտըզի մարգուկը երկար տատանումներէ վերջը՝ ստորագրեց Եւրոպայի տզրուկներուն փոփաքած խրատեն... 240000 լիրայի չնչին պարշիշի մը փոխարէն՝ մաղթելով անշուշտ որ իր սիրած երկրին այսպիսի ծառայութիւններ մատուցանելու առիթներ աւելի յաճախ պատահին այսուհետեւ։

ՍԼԱՖ

ՆԱՄԱԿ ՍՕՖԻԱՑԻՆ

(Մեր մասնաւոր թղթակցին)

—o—

Սոֆիա, 18 Յունիս, 1903։

Հեռագրական գործակալութիւնը չորս օրէ իվեր սկսեց նորէն տագնապալից լուրեր տալ Մակեդ. շարժումներու մասին։

Մայիս 30-էն մինչև Յուն. 6 կատարուած են 17 ընդհարումներ Մակեդ. հրոսակախումբերու և Թուրք կառավարութեան միջև, երեք Վիլայէթներու մէջ, ուր երկու կողմէն ալ բաւական թիւ կածներ կան։ Մակեդ. յեղափոխականները շատ տեղ պայթուցիկ ռումբերով կը կռուին. Թուրք կառավարութիւնը վերջերս 153 պայթուցիկ ռումբ գտած է իր և Պուլկար սահմանագծին միջև՝ Սաստ գիւղի մօտ։

Աւստր. և Ռուս. հիւպատոսները, որոնք գացած էին Պէրէքէթլիի շրջակաները Հիլմի փաշայի հետ, հոն գործուած խրժդրժութիւններու մասին քննութիւն մը կատարելու համար, հաստատեցին թէ ատոնց հեղինակները, նախ՝ Զէքի ոստիկանապետն է յետոյ՝ Թուրք զինուորները եղած են։ Ատոնք զէնք փնտռելու պատրուակով մտած և գողութիւններ ու առեւանգումներ են ըրած։

Պուլկար կառավարութեան խրկած նօթային ի պատասխան, Բ. Դուռը կը յայտարարէ թէ ոչ մի տեղեկագիր ստացուած չէ Սոֆիայէն՝ սահմանագլխի վրայ կատարուած ընդհարումները ծանուցանող։

Ա. Ն զրոյցը թէ կառավարութիւնը մտադիր է մի քանի զօրաբաժիններ իջեցնել՝ անհիմն է բոլորովին։ Իրողութիւնը սա է թէ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի Բեսարաբիայի շրջանին պահեստի զինուորներուն մէկ մասը զէնքի կոչել սահմանագլուխը զօրացնելու համար, և այսպիսով արգիլելու Մակեդ. փախստականներու դէպի ապին գաղթելը, ինչպէս նաև զինուած խումբերու դէպի Թուրքայ կողմը անցնիլը, որ վերջերս մեծ ծաւալ ստացած է։

Հ. Հ.

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печатница Б. Н. Малджиевъ — Русе.